



ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ**

ԵՐԵՎԱՆ 2009

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» կազմակերպության կողմից Երեւանի ավագանու ընտրությունների վերաբերյալ հեռախոսային հարցումը, որին մասնակցել է 672 մարդ, իրականացվել է հունիսի 5-ից 7-ը:


Հարցազրուցավարների կողմից կատարվել են զանգեր մայրաքաղաքի թվով 34 ԱՀԿ բաժանորդներին՝ հիմնականում յուրաքանչյուրին 20-ական: Ամեն մի առանձին ԱՀԿ-ի դեպքում որպես առաջին հեռախոսահամար ընտրվել է պատահական համար, իսկ այնուհետև համապատասխան քայլի (.-10-10) միջոցով անցում է կատարվել հաջորդ հեռախոսահամարներին, օրինակ՝ 22-02-13, 22-12-23, 22-22-33, 22-32-43 եւ այլն:

Հարցաթերթի պատասխանների՝ նախապես մշակված տարբերակներին հարցման ընթացքում, ելնելով դրա արդյունքներից, ավելացվել են «2.6 Պատասխան ոչ ըստ էության», «2.7 Կեղծված, նախօրոք պլանավորված ընտրություններ» եւ «2.8 Քաղաքականությունից սկզբունքորեն, կամ առանց դրա, հեռու լինելը» տարբերակները:

Հարցվողների տարիքը խմբավորվել է «1. 18-35», «2. 36-50», «3. 51-65» եւ «4. 66-ից ավելի» տարիքային խմբերում: Հարցվողների զբաղմունքը խմբավորվել է ըստ «1. Ուսանող», «2. Տնային տնտեսուհի», «3. Գործազուրկ», «4. Թոշակառու», «5. Փոքր ու միջին ձեռներեց, նաեւ ցածր օղակի տնօրեն», «6. Գրասենյակային աշխատակից, նաեւ ոչ մեծ պաշտոնյա», «7. Առանձին մասնագիտությունների տեր անձինք (մանկավարժ, երաժիշտ, բժիշկ եւ այլն)», «8. Մասնագիտություն չպահանջող աշխատանք կատարող անձ (պահակ, բանվոր եւ այլն)» եւ «9. Զինվորականներ» (վերջինիս նշվել է ընդամենը 4 անգամ, եւ այդ պատճառով արտացոլված չէ **Պատկեր 5-ում**) տարբերակների:

Հարցվողների պատասխանները պատկերների տեսքով ներկայացված են ստորեւ:


Պատկեր 1. Մասնակցել էք, արդյոք, Երեւանի ավագանու ընտրություններին




Պատկեր 2. Ձեր կարծիքով, ի՞նչն է պայմանավորել այս ընտրությունների արդյունքները



Պատկեր 3. Հարցվողի սեռը



Պատկեր 4. Հարցվողի տարիքը



Պատկեր 5. Հարցվողի գրաղմունքը

